

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՀԱՅԵՐԷՆԻ ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՏԼԱՍ (ԿԱԶՄՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ)

ԳԱՅԻԱՆԷ ԳԷՈՐԳԵԱՆ
ggayane@freenet.am

Լեզուի պատմության համար խիստ կարեւոր է բարբառների փոխառնչութիւնների գիտական քննութիւնը: Թէեւ Հայերէնի բարբառների քննութեան եւ ուսումնասիրութեան փորձերը սկսուել են ԺԹ. դարի կէսերից եւ այդ ժամանակից սկսած՝ բարբառները ենթարկուել են միայատկանիչ եւ բազմայատկանիչ դասակարգումների, սակայն բարբառային միաւորների միջեւ գոյութիւն ունեցող բարդ փոխյարաբերութիւնների պարզաբանման, յստակեցման եւ ճշգրտման խնդիրներն առ այսօր մնում են չլուծուած:

Բարբառագիտական հարցերի համակողմանի քննութիւնը հնարաւոր է միայն բարբառագիտական ատլասի առկայութեան պայմաններում, որի ստեղծումը նշանակալից երեւոյթ է ցանկացած լեզուի ուսումնասիրութեան պատմութեան մէջ: Վաղուց կազմուած են շատ լեզուների բարբառագիտական ատլասներ, ինչպէս՝ Ֆրանսերէնի, իտալերէնի, ռուսերէնի¹: Հայերէնի քննութիւնը այդ բնագաւառում բաւականին յետ է մնացել, եւ լեզուաբանական աշխարհագրութիւնը՝ որպէս հետազօտական մի մեթոդ, որի օգնութեամբ կարելի է ուսումնասիրել լեզուական երեւոյթների տարածական բաշխման օրինաչափութիւնները, ուշ է սկսել կիրառուել հայագիտութեան մէջ:

Հայերէնի բարբառագիտական ատլասի (Ատլաս) ստեղծման ուղղութեամբ առաջին փորձը կատարել է Հրաչեայ Աճառեանը (1876-1953), որի համար հեռաւոր երազանք է եղել ատլասի կազմումը. «Շատոնց մտադրութիւն ունէի կազմելու հայ բարբառներու լիակատար քարտէզը, ուր մինչեւ իսկ ամէն մի գիտի տեղը որոշուէր բարբառային խմբի մէջ: Ֆրանսիացիք ահա նոր ամբողջացուցին Ֆրանսիայի լեզուաբանական քարտէզը՝ հրատարակութիւնը, որուն ձեռնարկած էին քանի մը տարիէ ի վեր: Ամբողջը կը ձեւացնէ 1750 քարտէզներու ժողովածու մը, ուր ամէն մի բառ նշանակուած է, թէ ինչ ձեւ առած է ամբողջ Ֆրանսիայի զանազան կողմերը: Այս տեսակ խոշոր ձեռնարկութիւններ մենք մեր երազին մէջ ալ չպիտի տեսնենք: Բայց լեզուաբանական պարզ քարտէզ կարելի էր կազմել»²:

Աճառեանը կատարում է իր առջեւ դրուած խնդիրը՝ Հայ Բարբառագիտութիւն աշխատութեանը կցելով «Հայոց Խօսած Լեզուներու Ու Բարբառներու Քարտէսը», որը ներկայացնում է 337 հայաբնակ վայր, որոնց ճիւղային պատկանելութիւնը ցոյց է տրուում պայմանական նշանների օգնութեամբ:

1972ին լոյս է տեսնում Գէորգ Զահուկեանի (1920-2005) Հայ Բարբառագիտութեան Ներածութիւն աշխատութիւնը, որտեղ բարբառների դասակարգումը կատարուած է հարիւր հնչիւնաքերականական տարբերակիչ յատկանիշների հիման վրայ:

Նախապէս հեղինակի նպատակն է եղել հայերէնի բարբառների քննութիւնը կատարել լեզուաբանական աշխարհագրութեան մեթոդներով: Նման դէպքում, ըստ հեղինակի, այդ ուսումնասիրութիւնը. «...կը դառնար հայ բարբառագիտական ատլասի կազմման իւրատեսակ նախափորձ, կը նպաստէր հայ բարբառները աւելի մեծ մասշտաբով նկարագրելու եւ քարտէզագրելու գործին»³: Սակայն բնակչութեան տեղաշարժերի հետեւանքով խախտուած բարբառային յատկանիշների սահմանների եւ բարբառային միաւորների փոխարարելութեան որոշման յստակ եւ ստոյգ չափանիշների բացակայութիւնը հեղինակին հնարաւորութիւն չեն տուել իրագործելու իր սկզբնական նպատակը: Յիշեալ եւ այլ հարցերի ճշգրիտ բացայայտման ձգտմամբ Զահուկեանը հիմնադրել է բարբառագիտական մի նոր գիտակարգ, որը նա պայմանականօրէն կոչել է վիճակագրական բարբառագիտութիւն⁴:

Զահուկեանի յիշեալ աշխատութիւնն, անշուշտ, մեծ դեր է կատարել եւ նպաստել է հայ իրականութեան մէջ բարբառների ուսումնասիրութեան նոր եղանակներին անցնելուն եւ լեզուաբանական աշխարհագրութեան յետագայ զարգացմանը, ինչպէս նաեւ հայերէնի բարբառագիտական ատլասի կազմման աշխատանքները սկսելուն:

Ատլասի կազմման գործընթացը հայ իրականութեան մէջ սկսուել է 1975ին:

1972ին Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Լեզուի Ինստիտուտում ստեղծուել է բարբառագիտութեան բաժին, հայոց լեզուի պատմութեան եւ բարբառագիտութեան երախտաւոր Յովհաննէս Մուրադեանի (1920-1986) ղեկավարութեամբ: Նրա նախաձեռնութեամբ էլ սկիզբ է դրուել Ատլասի ստեղծման աշխատանքներին: Այդ տարիներին քննարկուել են հայերէնի բարբառների յետագայ ուսումնասիրութեան հետ կապուած բազմաթիւ հարցեր: Նպատակադարձար է համարուել հայերէնի բարբառների քննութիւնը կատարել լեզուաբանական աշխարհագրութեան մեթոդներով:

Հայերէնի բարբառների յետագայ ուսումնասիրութեան ընթացքում լեզուաբանական աշխարհագրութեան մեթոդների կիրառման անհրաժեշտութիւնը պայմանաւորուած էր հայ բարբառագիտութեան մէջ գոյութիւն ունեցող որոշ սկզբունքների տեսական եւ պատմական հիմքերի, բարբառների, ենթաբարբառների եւ խօսուածքների միմեանց նկատմամբ ունեցած փոխարարելութիւնների ճշգրտման որոշակի չափանիշների, ինչպես նաեւ որոշ բարբառային միաւորների վերաբերեալ տեղեկութիւնների իսպառ բացակայութեամբ:

Ակնյայտ էր, որ վերոնշեալ հարցերը յստակ պարզաբանում կարող էին ստանալ միայն Ատլասի առկայութեան պայմաններում:

Նկատի ունենալով, որ Ատլասի ստեղծման համար անհրաժեշտ էր կատարուելիք աշխատանքների մի քանի փուլ, դրանք սկսեցին իրականացուել յաջոր-

դարար, փուլ առ փուլ՝ հարկ եղած դէպքում նաեւ կիրառելով դրանց միաժամանակեայ կատարումը:

Առաջին փուլի հիմնական խնդիրը հնչիւնական, բառային ու քերականական այն հիմնական յատկանիշների ընտրութիւնն էր, որոնցով յետագայում պիտի որոշուէին հայերէնի բարբառների՝ միմեանց նկատմամբ ունեցած ընդհանրութիւններն ու տարբերութիւնները:

Բարբառային տարբեր տարածքներին յատուկ առաւել բնորոշ զուգարանութիւնների ընտրութիւնը հնարաւորութիւն տուեց 1877ին հրատարակել Հայերէնի Բարբառագիտական Ատլասի Նիւթերի Հաւաքման Ծրագիրը (Ծրագիր) խիստ արժէքաւոր աշխատանքը, որը հիմնականում կազմել է Մուրադեանը: «Քերականական Չուգարանութիւններ» բաժնի կազմութեանը նրան օգնել են Ահարոն Գրիգորեանը, Դարիկօ Կոստանդեանը եւ Անահիտ Հանէեանը:

Ծրագրի հրատարակումից յետոյ մշակուեցին բարբառային նիւթի հաւաքման եւ գրանցման որոշակի սկզբունքներ:

Լեզուաբանական աշխարհագրութեան մէջ ընդունուած է այն տեսակէտը, որ բարբառային երեւոյթները կենտրոնից դէպի ծայրամասերը շարժւում են հաւասարաչափ: Ըստ Չէյմբրըզի՝ «If we travel from village to village in a particular direction, we notice linguistic differences which distinguish one village from another. Sometimes these differences will be larger, sometimes smaller, but they will be cumulative. The further we get from our starting point, the larger the differences will become»:

Առաջնորդուելով այս դրոյթով՝ սովորաբար ատլասի համար ընտրւում է բնակավայրերի մի այնպիսի ամբողջութիւն, որի վրայ նշուած կէտերը միմեանցից գտնւում են համաչափ հեռաւորութեան վրայ: Նման պարագայում անհրաժեշտ չէ լրացնել բոլոր բնակավայրերի խօսուածքները: Սակայն յիշեալ սկզբունքը ընդունելի է ոչ բոլոր լեզուների համար: Այն կարող է կիրառուել միայն այնպիսի բարբառների դէպքում, որոնց կրողները տեղաշարժերի չեն ենթարկուել:

Ատլասի բնակավայրերի ընտրութեան վերոյիշեալ մօտեցումը ընդունելի չէ հայերէնի բարբառների համար, քանի որ հայ ժողովրդի բազմաթիւ գաղթերն ու տեղահանութիւնները փոխել են հայերէնի բարբառների տեղադրութեան նախնական պատկերը: Ինչպէս նշում է Մուրադեանը. «Հայերէնի ատլասի համար ամենաճիշտ սկզբունքը՝ անխտիր բոլոր հայախօս բնակավայրերը հարցման ենթարկելն է, անկախ այն բանից, թէ այդ բնակավայրերը կը մտնեն քարտէզների մէջ, թէ ոչ: Այդ ձեւով նիւթերի հաւաքումը մի կողմից հնարաւորութիւն կը տայ յայտնաբերելու իրենց բնօրրանից կտրուած ու այլուր տեղափոխուած բարբառային միատրոնները, որոնք քարտէզագրման ժամանակ մանրամասնօրէն կը մշակուեն, կը տեղադրուեն իրենց պատմական միջավայրում, միւս կողմից՝ համատարած հարցումից յետոյ դժուար չի լինի քարտէզների համար ընտրել աւելի տիպական բնակավայրերը ըստ դրանց

բարբառային մերձատրուքեան աստիճանի եւ դրանով իսկ ապահովել բնականայրերի ցանցի անհրաժեշտ խտութիւնը»⁶:

Նկատի ունենալով վերոյիշեալը՝ հարցման ենթակայ ելակէտային միաւորը համարուել է ոչ թէ բարբառը, այլ կոնկրէտ բնականայրի խօսուածքը, եւ նիւթերը սկսել են հաւաքուել բոլոր հայաբնակ վայրերից:

Անվիճելի է, որ բարբառային նիւթի հաւաքումը կարեւորագոյն եւ երկարատեւ գործընթաց է, միաժամանակ՝ այն անհրաժեշտ գործօնն է, առանց որի անհնար է իրականացնել Ատլասի կազմումը: Ատլասի համար նիւթերի հաւաքման աշխատանքները բարբառագիտութեան բաժնի աշխատակիցների կողմից սկսուել են 1977ին: Դրանք կատարուել են գիտարշաւների միջոցով, որոնց ընթացքում ուսումնասիրուել են տուեալ տարածքի բոլոր բնականայրերը: Բարբառային միաւորների գրանցումը կատարուել է ըստ *Ծրագրի*, որը Ալբերտ Խաչատրեանի կարծիքով՝ «...ստեղծուած է բարբառագիտութեան զարգացման արդի մակարդակով, նրանում ոչ միայն լիովին հաշուի է առնուած ուրիշ լեզուների համանման հարցարանների փորձը, այլեւ հարստացուած ու կատարելագործուած են դրանց կազմման սկզբունքներն ու կառուցուածքային որոշ կողմեր»⁷:

Ընդունուած է Ատլասի նիւթերի հաւաքման համար կազմել հարցարաններ, որտեղ լեզուական յատկանիշները ներկայացոււմ են որպէս հարցեր: Ատլասի *Ծրագրի*ը տարբերոււմ է միւս լեզուների համար կազմուած հարցարաններից, քանի որ այստեղ լեզուական երեւոյթները ներկայացուած են զուգարանութիւնների ձեւով, որը Մուրադեանի կարծիքով «...ոչ միայն կանխորոշում է ապագայ ատլասի բովանդակութիւնը, այլեւ կիսով չափ հեշտացնում է նիւթերի հաւաքման, դրանց մշակման ու քարտէզներ կազմելու աշխատանքները»⁸:

*Ծրագրի*ը այլ լեզուների համար կազմուած հարցարաններից տարբերոււմ է նաեւ նրանով, որ այստեղ խախտուած է լեզուական յատկանիշների ընդունուած յաջորդականութիւնը՝ այն սկսոււմ է բառային եւ աւարտոււմ հնչիւնական զուգարանութիւններով: *Ծրագրի*ի նման կառուցուածքը բացատրոււմ է այն փաստով, որ սխալների հաւանականութիւնը գրանցման սկզբում աւելի չատ է, քան վերջում, երբ գրանցողը խօսուածքը արդէն ծանօթ է լրացնողին: Իսկ «Բառային Զուգարանութիւններ» բաժնի համար տուեալ բառաձեւը հնչիւնաբանօրէն ճիշտ ներկայացնելը թէեւ կարեւոր է, սակայն էականը տուեալ հասկացութեան համար գոյութիւն ունեցող բարբառային տարբերակների հաւաստի եւ ստոյգ գրանցումն է:

Կայ նաեւ մէկ այլ պատճառ: Յաճախ բարբառախօսներին պէտք է համոզել սկսած աշխատանքը յաջողութեամբ աւարտելու համար, քանի որ ծրագիրն ընդարձակ է, եւ մէկ խօսուածքի գրանցումը տեւում է 6-7 օր, հետեւաբար. «Բառային զուգարանութիւնները, լինելով «Ծրագրի» առաւել հետաքրքիր ու հեշտ ընկալելի բաժինը, շարժում են տեղեկատու անձանց հետաքրքրասիրութիւնը, նրանց հոգեկան աշխարհում արթնացնում են առանձնակի ապրումներ, յուշեր ու տպատրութիւններ, պարզելում են լեզուագագոյութեան հիմնաւիջ

պահեր եւ արուող գործի նկատմամբ առաջացնում են որոշակի ոգեւորութիւն»⁹:

Ծրագիրը կազմուած է բառային, քերականական եւ հնչիւնական գուգարանութիւններն ընդգրկող բաժիններից:

Առաջին բաժինը՝ «Բառային Զուգարանութիւններ», կազմուած է երկու մասից՝ «Հասկացական-բառանուանողական Զուգարանութիւններ» եւ «Բառիմաստային Զուգարանութիւններ»:

«Հասկացական-բառանուանողական Զուգարանութիւններին» խնդիրն է պարզել բառային նոյն միաւորի դիմաց տարբեր վայրերում գործառող տարբերակները: Այն ընդգրկում է 478 յօդուած՝ 1-478: Հասկացութիւնները ներկայացուած են ըստ իմաստային դաշտերի՝ բնութեան երեւոյթներ, բոյսեր, գործիքներ, հագուստ, գրադմունք եւն: Իւրաքանչիւր յօդուած կազմուած է տուեալ հասկացութեան գրական անուանումից, բառաշարքից, որի մէջ մտնում են այդ հասկացութեան մինչ այդ յայտնի բարբառային տարբերակները եւ հասկացութեան իմաստը պարզաբանող օրինակից: Այսպէս՝

288. Դառն - դառը, աղու, լեղի:

Կորիզը դառն է¹⁰:

Յօդուածում բերուող բառաշարքը, սակայն, սպառիչ չէ, եւ գրանցումների ընթացքում արձանագրուած են նորանոր տարբերակներ:

Եթէ գրական լեզւում տուեալ հասկացութեան իմաստը բառային անուանում չունի, այս դէպքում յօդուածը սկսւում է հասկացութեան բովանդակութիւնը բացատրող բառակապակցութեամբ, որից յետոյ տրւում են բարբառային տարբերակները: Այսպէս՝

23. Սենեակում պատի մէջ թողած, երեսը բաց պահարան - պատրիհան, ակնատ, աչկունք, խըլուակ¹¹:

Վերոյիշեալ մասի գուգարանութիւնները լրացուել են՝ նախ նշելով գուգարանութեան թուահամարը, ապա՝ տուեալ հասկացութեան գրական եզրը, որից յետոյ գիտական տառադարձութեամբ տրւում է բարբառային տարբերակը, այնուհետեւ՝ նախադասութիւնը, այսպէս՝

187. Թռչուն - հաւկ

Հաւկը հաւգիտ գաձէ¹²:

Եթէ որեւէ խօսուածքում տուեալ հասկացութեան համար գործածուած են մէկից աւելի տարբերակներ, ապա բոլորը գրանցւում են՝ տալով լրացուցիչ տեղեկութիւններ:

Բառային գուգարանութիւնների երկրորդ՝ «Բառիմաստային Զուգարանութիւններ» հատուածի խնդիրն է պարզել բառային նոյն միաւորի իմաստային տարբերութիւնները բարբառախօս վայրերում: Այն բաղկացած է 80 յօդուածից /479-559/:

Յիշեալ բաժնում նախապէս տրւում է գուգարանութիւնը, որից յետոյ նշւում են տուեալ հասկացութեան բարբառային իմաստները, այսպէս՝

517. Դեղ – 1. Բուժման միջոց: 2. Թոյն: 3. Սկնդեղ: 4. Քրախոտ: 5. Աչքի ծարիր: 6. Պանրի մակարդ¹³:

Բառային զուգաբանութիւնների երկրորդ մասի յօդուածների լրացումը կատարուել է նոյն եղանակով. միայն թէ նախ գրանցուել է տուեալ հասկացութեան բարբառային տարրերակը, որից յետոյ տրուել են դրա այն իմաստները, որոնք գործառուում են տուեալ խօսուածքում, այսպէս՝

517. Դեղ – տեղ – 1. Բուժման միջոց: 2. Թոյն: 3. Պանրի մակարդ¹⁴:

Մրագիրի երկրորդ բաժինը քերականական զուգաբանութիւններն են, որն ընդգրկում է ձեւաբանական, մասամբ նաեւ՝ շարահիւսական յատկանիշներ: Այն կազմուած է 120 յօդուածից՝ 560-680: Այս հատուածում փորձ է արւում պարզել, թէ տուեալ քերականական իմաստի արտայայտման համար ձեւական ինչ միջոցներ են գործառուում բարբառախօս վայրերը: Այդ պատճառով նախ տրւում է քերականական իմաստը եւ դրսեւորման ձեւերը, որից յետոյ բերւում են օրինակներ, այսպէս՝

577. - ություն ւածանցով բառերի հոլովումը՝

ախկատութուն - ախկատութինի,

պանցրութուն - պանցրութինի,

հերկէնութուն - հերկէնութինի,

ախպէրութուն - ախպէրութինի,

լէնութուն - լէնութինի,

կարճութուն - կարճութինի,

հաստութուն - հաստութինի,

ճոճութուն - ճոճութունի,

չարութուն - չարութինի,

քաջութուն - քաջութինի¹⁵

Մրագիրի երրորդ բաժնի՝ «Հնչիւնական Ձուգաբանութիւններ»ի խնդիրը պատմական Հնչիւնափոխութեան երեւոյթների բացայայտումն է: Այս բաժնի զուգաբանութիւնները, որոնց թիւը հասնում է հարիւրի՝ ընդգրկելով 681-778 համարները, ունեն նախորդ բաժնի զուգաբանութիւնների կառուցուածքը: Այստեղ եւս յօդուածի վերջում տրւում են տուեալ Հնչիւնական օրինաչափութիւնը պարզաբանող բառեր. այսպէս օրինակ՝

741. Բառամիջի եւ բառավերջի հի դիմաց՝

ա /վ/հոդ-վրէդ, վէդ/

բ /ֆ/հոդ – ֆոդ/

Բառասկզբի հի դիմաց՝

հոք/որք/, հոգի, հոդ, հոտ, հոտել, հոր, որս/հորս/, հոդ, հոս, հոն...¹⁶

Մրագիրի յիշեալ մասի զուգաբանութիւնները գրանցելիս մեծ ուշադրութիւն է դարձուել յիշեալ բառերի բարբառային տարրերակների գիտական տառադարձութեան վրայ, այսպէս օրինակ՝

741. Ուրթիկ, խոդ, խոտ, խոտել, խօկի, խոր¹⁷:

Ծրագրի վերջում տրուած է Յովհաննէս Թումանեանի «Սուտասանը» հեքիաթը, որը գրանցուել է իւրաքանչիւր տետրի վերջում՝ տուեալ բարբառային միաւորին համապատասխան գիտական տառադարձութեամբ:

Նիւթերի հաւաքումը ըստ Ծրագրի կատարուել է ամէն մի բնակավայրի համար առանձին մէկ տետրի մէջ: Եթէ մի քանի վայրեր ունեցել են նոյն խօսուածքը, ապա դրանք ներկայացուել են մէկ տետրում՝ նշելով այդ բնակավայրերը:

Տետրի սկզբում տրուում են համառօտ տեղեկութիւններ գրանցուող վայրի, բնակիչների, խօսուածքի վերաբերեալ՝ նկատի ունենալով հետեւեալ հարցադրումները.

«1. Բնակավայրի անունը/հինը եւ նորը/, վարչական բաժանմամբ ո՞ր շրջանի/գաւառի/ մէջ է մտնում/մտել/.

2. Բնակչութեան մօտաւոր քանակը.

3. Գրանցման ենթակայ խօսուածքի կրողները տեղացիներ են, թէ՞ տեղափոխուածներ. եկուորներ լինելու դէպքում նշում է, թէ որտեղից եւ երբ են եկել.

4. Հասարակութիւնը լեզուական տեսակէտից համասեօն է, թէ՞ ոչ: Եթէ նկատուում են անհամասեռութեան երեւոյթներ, ապա դրանք ի՞նչ բնոյթի են»¹⁸:

Խօսուածքը լրացնողը իր մասին եւս յայտնում է որոշ տեղեկութիւններ՝ նշելով նաեւ այն փաստը, թէ տուեալ բարբառային միաւորը իր մայրենի՞ խօսուածքն է, թէ՞ անձանօթ է:

Տեղեկութիւններ են տրուում նաեւ գրանցման աղբիւրի՝ բարբառախօսների մասին, մանրամասն նշում են նրանց կենսագրական տուեալները, բարբառի իմացութեան աստիճանը:

Առ այսօր ըստ Ծրագրի լրացուած է մօտ 500 բարբառային միաւոր Հայաստանի արեւելեան եւ արեւմտեան տարածքներից: Ինչպէս արեւելեան, այնպէս էլ արեւմտեան վայրերի նիւթերը հաւաքուած են Հայաստանի Հանրապետութեան տարածքում: Արեւմտեան տարածքի բարբառային միաւորները գրանցուել են 1915ից յետոյ Արեւելեան Հայաստան եկած գաղթականների օգնութեամբ, որոնք յաճախ տուեալ բնակավայրի միակ բնակիչն են եղել, հետեւաբար բարբառային միաւորի միակ կրողը:

Ակնյայտ է սակայն, որ միայն Հայաստանի Հանրապետութիւնում օթեւան գտած մարդկանց օգնութեամբ հնարաւոր չէ լրացնել Արեւմտեան Հայաստանի տարածքի բոլոր (կամ գոնէ մեծ մասի) հայաբնակ վայրերի բարբառային միաւորները: Ուստի նկատի ունենալով Ատլասի կարեւորութիւնը եւ արեւմտահայ խօսուածքների մասին տեղեկութիւններ ստանալու հնարաւորութիւնների օրէջքը նուազումը, առաջնահերթ խնդիր է դառնում արտասահմանեան երկրներում ապաստանած մարդկանց օգնութեամբ արեւմտահայ վայրերի բարբառային միաւորների գրանցումը:

Թէեւ նիւթերի հաւաքումը դեռ աւարտուած չէ, սակայն ծրագրի կառուցուածքը հնարաւորութիւն է տալիս եղած նիւթերի հիման վրայ անցնել գուգարանութիւնների քարտէզագրմանը:

Արդէն սկսուած են Ատլասի նիւթերի քարտէզագրման աշխատանքները, մշակուած են որոշակի սկզբունքներ՝ հաւաքուած հսկայածաւալ նիւթի դասակարգման, համակարգիչների մէջ ներածման եւ քարտէզների կազմման¹⁰:

Քարտէզագրման փուլի աշխատանքներին մեծ օգնութիւն է ցոյց տալիս Լէյդէնի Համալսարանի պրոֆեսոր, հայագէտ Ե. Վայտէնբերգը, որը գիտակցելով դրա կարեւորութիւնը եւ նշանակութիւնը հայագիտութեան բնագաւառում, անում է ամէն հնարաւոր բան՝ օր առաջ Ատլասը պատրաստ տեսնելու ցանկութեամբ:

Նախատեսուած է, որ Ատլասի համար կը կազմուի մէկ հիմնական քարտէզ, որը կը ներկայացնի Հայաստանի բարբառային պատկերը 1914ի դրութեամբ, որտեղ նշուած կը լինեն քարտէզագրման ենթակայ բոլոր բնակավայրերը: Յաջորդ քարտէզում բնակավայրերը կը ներկայացուեն համարակալուած, որին կից կը տրուի քարտէզագրուող բնակավայրերի ցուցակը՝ իւրաքանչիւր բնակավայրին յատկացուած համարով: Սրանց կը յաջորդեն բառային, քերականական եւ հնչիւնաբանական յատկանիշները դրսեւորող քարտէզները, որոնք կը կազմուեն լեզուական այն նիւթի հիման վրայ, որը հաւաքուած է Ծրագրի տուեալ յօդուածին համապատասխան:

Վերոնշեալ քարտէզներից իւրաքանչիւրի վերնագրում կ'արտացոլուի քարտէզագրուող գուգարանութեան բովանդակութիւնը, իսկ պայմանական որոշակի նշանների օգնութեամբ ցոյց կը տրուեն դրանց տարածման սահմանները: Ատլասը կ'ունենայ մօտ 800 լեզուաբանական քարտէզ, որոնցից իւրաքանչիւրը կ'ունենայ նաեւ նիւթի վերաբերեալ լրացուցիչ տեղեկութիւններ հաղորդող բացատրութիւններ:

Ատլասը կ'արեւորուում է բարբառային նիւթով, նիւթի հաւաքման սկզբունքներով, տուեալների բազմազանութեամբ, բարբառ-գրական եզր դրսեւորումների իւրօրինակութեամբ, նաեւ կորստեան վտանգի առջեւ կանգնած արեւմտահայ բարբառների գոնէ պահպանուած վիճակի ամրագրմամբ եւ բարբառային հսկայածաւալ նիւթը անդառնալի կորստից փրկելու փաստով:

Հայերէնի բարբառագիտական ատլասի օգնութեամբ կը ճշտուեն բարբառային միաւորների փոխարարելիւթիւնները, հայերէնի բարբառների դասակարգման սկզբունքները, կը բացայայտուեն բարբառային կարեւոր յատկանիշների ընդհանրութիւններն ու տարբերութիւնները: Այն, գիտական շրջանառութեան մէջ դնելով նոր տուեալներ, եզակի փաստեր, կը նպաստի հայերէնի բարբառների ուսումնասիրութեանը, հնարաւորութիւն կը տայ պարզելու բարբառախօս վայրերի պատմական ընդհանրութիւնները, աւելի ստոյգ ու ճշգրիտ մեկնաբանելու լեզուական փոխազդեցութիւններն ու իրականութիւնները:

Լեզուարանական նշանակութիւնից բացի Ատլասը կ'ունենայ նաեւ պատմական եւ մշակութային արժէք: Նրա օգնութեամբ հնարաւոր կը լինի լուսաբանել ոչ միայն բանասիրական, լեզուարանական, այլեւ պատմագիտական, ազգագրական եւ բազմաթիւ այլ հարցեր:

ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Տե՛ս՝ Հայերէնի Բարրառագիտական Ատլաս (Ուսումնասիրութիւններ եւ Նիւթեր), մաս 1, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1982, էջ 9-16:
- ² Հրաչեայ Աճառեան, Հայ Բարրառագիտութիւն, Մոսկուա-Նոր Նախիջեւան, 1911, էջ 14:
- ³ Գէորգ Զահուկեան, Հայ Բարրառագիտութեան Ներածութիւն, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1972, էջ 13:
- ⁴ Զահուկեան, էջ 14:
- ⁵ J. K. Chambers, P. Trudgill, *Dialectology*, Cambridge, Cambridge University Press, 1980, էջ 6:
- ⁶ Տե՛ս՝ Հայերէնի Բարրառագիտական Ատլաս, մաս 1, էջ 21:
- ⁷ Տե՛ս՝ Հայերէնի Բարրառագիտական Ատլաս (Ուսումնասիրութիւններ եւ Նիւթեր), մաս 2, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1985, էջ 8:
- ⁸ Տե՛ս՝ Հայերէնի Բարրառագիտական Ատլաս, մաս 1, էջ 6:
- ⁹ Տե՛ս՝ Հայերէնի Բարրառագիտական Ատլաս, մաս 2, էջ 17:
- ¹⁰ Հայերէնի Բարրառագիտական Ատլասի Նիւթերի Հաւաքման Ծրագիր, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1977, էջ 52:
- ¹¹ Նոյն, էջ 27:
- ¹² Հասպատան գիւղ, Աղբակ գաւառ, Ատլասի անտիպ նիւթեր, տետր 316:
- ¹³ Հայերէնի Բարրառագիտական Ատլասի Նիւթերի Հաւաքման Ծրագիր, էջ 73:
- ¹⁴ Դերըզ գիւղ, Բիթլիս գաւառ, Ատլասի անտիպ նիւթեր, տետր 319:
- ¹⁵ Հօրմօրուր գիւղ, Վերին Հայոց Ձոր գաւառ, տետր 318:
- ¹⁶ Հայերէնի Բարրառագիտական Ատլասի Նիւթերի Հաւաքման Ծրագիր, էջ 128:
- ¹⁷ Չենիս գիւղ, Վան, Ատլասի անտիպ նիւթեր, տետր 320:
- ¹⁸ Հայերէնի Բարրառագիտական Ատլասի Նիւթերի Հաւաքման Ծրագիր, էջ 11-12:
- ¹⁹ Հայերէնի բարրառագիտական ատլասի կազմման սկզբունքները ներկայացուել են Մուրադեանի կողմից դեռեւս 80ականներին (Հայերէնի Բարրառագիտական Ատլաս, մաս 1, էջ 22-24):